ԿԱՐԾԻՔ

Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում» խորագրով ատենախոսության մասին, ներկայացված ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ներկայումս ընտանիքում կառուցվածքային և գործառութային փոփոխությունները, սերունդների միջև հայացքների ու չափանիշների տարբերությունները հանգեցնում են դաստիարակչական լուրջ հիմնախնդիրների, որոնց հաղթահարման համար արդիական է էթնոմանկավարժության դերի և գործառույթների նորովի արժևորումը: Այդ կարևոր և արդիական հիմնախնդրին է նվիրված գրախոսվող ատենախոսությունը:

Հետազոտության մեջ արծարծված է այն հիմնարար գաղափարը որ այսօր կենսական անհրաժեշտություն է հասարակությանը հումանիստական արժեհամակարգի շուրջ միավորելը ազգի, պետության, տարածաշրջանի և համամարդկային խնդիրների արդյունավետ լուծման նպատակով:

Հետազոտական աշխատանքի ներածական մասում հիմնավորվել է աշխատանքի արդիականությունը՝ պայմանավորված հայ էթնոսի պատմամշակութային առանձնահատկություններով, ներկայացվել են հետազոտության բաղադրիչները՝ օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, խնդիրները: Պաշտպանությանը ներկայացվող դրույթների բովանդակային փոխկապակցվածությունից տրամաբանորեն բխեցված են հետազոտության ամփոփիչ եզրակացությունները:

Առաջին՝ «Ընտանեկան դաստիարակությունը՝ սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր» գլխում ատենախոսը մեկնաբանել, համադրել է ընտանիքի վերաբերյալ

սահմանումներ, անդրադարձել է ընտանեկան կառույցի մայրիշխանական և հայրիշխանական զարգացումներին, միջսեռային փոխհարաբերություններին: Ընտանիքը դիտարկելով որպես միջսեռային և միջսերնդային փոխհարաբերությունների մշակույթի զարգացման արդյունք՝ հետազոտողը ընտանիքի արժեհամակարգով և կառուցվածքային առանձնահատկություններով է կարևորում երեխայի դաստիարակության գործընթացի առանձնահատկությունները, ընտանիքի և քաղաքակրթության փոխկապակցված ապագան: Հեղինակը, քննարկելով ընտանեկան դաստիարակության հարցերը հայկական էթնոմշակույթում, անդրադառնում է համաշխարհային և հայ մտավորականների դաստիարակչական հայացքներին, ինչպես նաև սուրբգրային տեքստերին, ազգագրական նյութերին:

Ատենախոսության երկրորդ՝ «Ընտանեկան դաստիարակության միջոցները հայ էթնոմանկավարժական մշակույթում» գլխում ատենախոսը վերլուծել է հայկական էպոսում, ժողովրդական հեքիաթներում, առակներում, ասացվածքներում, երգ ու պարում արտացոլված դաստիարակչական նշանակություն ունեցող գաղափարները: Նա անդրադարձել է նաև ընտանեկան ծիսական արարողությունների դաստիարակչական նշանակությանը:

Երրորդ՝ «Ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրը ժամանակակից աշխարհում» խորագրով գլխում հետազոտողն անդրադարձել է ժամանակակից փոխակերպվող աշխարհում ժողովրդագրական իրավիճակին, ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին և էթնոմանկավարժական մշակույթը դիտարկել է որպես ընտանեկան բռնությունների կանխարգելման միջոց: Այս գլխում Ա.Մանուկյանը շարադրել է նաև ՀՀ կրթական տարբեր հաստատություններում իր կողմից անցկացված սոցիարցման ընթացքն ու արդյունքները: Սոցիոլոգիական հարցումներն ընդգրկում են ընտանեկան կյանքի բոլոր կողմերը, նաև ընտանեկան բռնություններն ու ժողովրդագրական բնույթի հարցեր:

Գիտական նորույթ հանդիսացող «Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն» փորձնական դասընթացի ծրագրը մշակված է գիտատեսական վերլուծությունների և սոցիարցման արդյունքների հիման վրա: Ծրագիրը նպատակաուղղված է էթնոմանկավարժական մշակույթի տարրերի՝ ժամանակակից պայմաններում համակարգված կիրառմանը և միտված է նպաստելու ընտանեկան դաստիարակության հիմնահարցի լուծմանը:

Ատենախոսության մեջ վերլուծված են ոչ միայն մեծածավալ տեսական նյութ, այլև էթնոկիրառական փորձ: Կարևորում ենք համարում արժևորել հետազոտության մեջ դաստիարակչական բազմաթիվ օրինակների արդիականությունը: Ուշագրավ է նաև այն, որ Ա.Մանուկյանի կողմից, նախ առանձնացվել ու կարևորվել է կնոջ նկարագիրը, նրա դերակատարումը էթնոընտանեկան դաստիարակչական մշակույթի ձևավորման, պահպանման և զարգացման գործընթացում: Ինչպես նաև, հայկյան նահապետական ներընտանեկան մշակույթի ձևավորման ու զարգացման դիտարկումը որպես կնոջ մայրական իրավունքի պահպանման միջոց:

Ատենախոսն ընտանիքի զարգացման ընթացքը դիտարկելիս հղումներ է կատարել հասարակական հիշողության դրվագներն իրենց մեջ պահպանած նյութական և հոգևոր մշակութային գործերին, վեր հանել նախնիների և մերօրյա հասարակության օրգանական կապը:

Հայկական ուսուցողական մշակույթի էթնոմանկավարժական ենթամշակույթի համակողմանի վերլուծությունից են բխում կատարված եզրակացությունները, որոնք ունեն գիտագործնական նշանակություն ոչ միայն մանկավարժների, այլև հոգեբանների, մարդաբանների, ազգագրագետների, քաղաքագետների և բոլոր այն մասնագետների համար, որոնց գործունեության առանցքը մարդու և հասարակության, քաղաքացու և պետության հումանիստական զարգացումներն են: Մշակութամանկավարժական որոնումները չունեն ժամանակային կամ աշխարհագրական սահմանափակումներ, արտացոլված են չինական, կովկասյան,

մերձավորարևելյան, նորդական մշակույթների լավագույն նմուշների համեմատությունները:

Օգտագործված գրականության 151 աղբյուրներն ընդգրկում են ոչ միայն մանկավարժական, այլև փիլիսոփայական, հոգեվերլուծական, մարդաբանական, ազգագրական, երաժշտագիտական, բանահյուսական տարազգային սկզբնաղբյուրներ: Հետազոտական աշխատանքում առաջադրված բոլոր խնդիրները մանրազնին ուսումնասիրվել են և ստացել նորաբնույթ լուծումներ, ինչը խոսում է հեղինակի ոչ միայն գիտելիքների, այլև վերլուծահամադրական աշխատանք իրականացնելու կարողությունների մասին:

Ատենախոսությունը տրամաբանորեն ամբողջական, ավարտուն և արդիական հնչեղություն ունեցող հիմնավոր աշխատանք է, ինչը պայմանավորված է էթնոմանկավարժական տեսանկյունից կատարված փիլիսոփայական, պատմագիտական, բանասիրական, ազգագրական, արվեստագիտական, մշակութաբանական նյութերի բազմաթիվ օրինակների և ինքնատիպ վերլուծություններով, համեմատություններով և համադրություններով:

Նշված դրական կողմերին զուգահեռ կատարում ենք որոշ նկատառումներ.

1. Կարելի էր փորձնական դասընթացի ծրագրում թեմաները ներկայացնել ինտեգրվող առարկաների համատեքստում՝ այն բազմատեսանկյուն ներկայացնելու և սովորողների կողմից առավել խորությամբ յուրացնելու համար:

2. Նպատակահարմար կլիներ «Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն» փորձնական դասընթացի ծրագիրն ամբողջությամբ չներկայացնել ատենախոսության տեքստում, այլ միայն առարկայի թեմատիկ տրոհումը, իսկ ծրագրի բացատրագիրը զետեղել հավելվածներում՝ ատենախոսության տեքստի շարադրանքը չծանրաբեռնելու համար:

Մեր կողմից արված դիտողություններն ընդհանուր առմամբ չեն ազդում այս հիմնավոր ատենախոսության արժեքի և աշխատանքի վերաբերյալ դրական գնահատականի վրա:

Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲՈԿ-ի կողմից ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, ԵՊՀ Սոցիալ-տնտեսական
աշխարհագրության ամբիոնի վարիչ
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Վ.Վ.Գրիգորյան

Վ.Վ.Գրիգորյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ՝ Լ. Ս. Հովսեփյան

_06_ , _02_ , 2020 թ.